# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ
# ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի 2011 թվականի հունիսի 6-ի թիվ 164-Լ հրամանով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 97-րդ կետի 2)-րդ ենթակետի համաձայն և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ ԳԱԿ - ՇՀԾՁԲ -11/19

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետև՝ Կենտրոն), որը գտնվում է ք. Երևան, Կոմիտասի պ., 54/բ հասցեում, հայտարարում է շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով սահմանված չափանիշներին համապատասխանող մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Ավտոլվացման ծառայությունների ձեռքբերման» շրջանակային համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր):

Գնման առարկա է հանդիսանալու Ավտոլվացման ծառայությունների ձեռքբերումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն, ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ընթացակարգի հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել Կենտրոնին:

Հայերեն լեզվով ընթացակարգի հրավերի փաստաթղթային տարբերակը տրամադրելու համար պահանջվում է վճար՝ 858 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի «Հայէկոնոմբանկի» Արաբկիրի մ/ճ, Հ/Հ 163058561289 «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվեհամարին: Կենտրոնը պարտավորվում է պահանջվող վճարի անդորրագիրը ներկայացվելու օրվա ընթացքում հրավերը տրամադրել ընթացակարգի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Ռուսերենով կամ անգլերենով ընթացակարգի հրավեր ստանալու համար պահանջվում է վճար 250000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի «Հայէկոնոմբանկի» Արաբկիրի մ/ճ, Հ/Հ 163058561289 «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվեհամարին, ընդ որում եթե ընթացակարգի հրավերի թարգմանության, տպագրման և առաքման ծախսերը կազմում են ավելին, քան 250000 ՀՀ դրամը, հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձը վճարում է նաև տարբերությամբ առաջացած գումարը: Եթե ընթացակարգի հրավերի թարգմանության, տպագրման և առաքման ծախսերը ավելի քիչ են կազմում, քան 250000 ՀՀ դրամը, Կենտրոնը պարտավորվում է վերադարձնել այդ տարբերությունը: Կենտրոնը

ապահովում է հրավերի տրամադրումն այդպիսի պահանջ և վճարի անդորրագիրը ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում: Կենտրոնի կողմից ռուսերենով կամ անգլերենով տրամադրված հրավերն ունի նույն իրավական ուժը, ինչ որ հայերեն հրավերը: Ռուսերենով կամ անգլերենով հրավերի և հայերեն հրավերի տարբերության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Որպես ընթացակարգի հնարավոր մասնակից գրանցվելու նպատակով գրանցման հայտը անհրաժեշտ է ներկայացնել «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, ք. Երևան, Կոմիտասի պ., 54/բ, 115 սենյակ հասցեով, յուրաքանչյուր աշխատանքային օրերին և ժամերին և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները գրանցման հայտով Կենտրոնին պետք է ներկայացնեն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Գնումների աջակցման կենտրոն